2126.7/158

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«19» 01 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0017-21

Ձեռնարկողը՝ ***«Էյ Էմ Թի» ՍՊԸ***
Սյունիքի մարզ,
ք. Քաջարան Լեռնագործների փ. 17/33

Գործունեությունը՝ ***Արամուսի բազալտների հանքավայրի «Էյ Էմ Թի» տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0017-21

« 19 » 01 2021թ.

Արամուսի բազալտների հանքավայրի «Էյ Էմ Թի» տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնակող՝	«Էյ Էմ Թի» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն՝ կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	/Ա կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Արամուս համայնք

Ներածական մաս. «Էյ Էմ Թի» ՍՊԸ-ն նախատեսում է իրականացնել Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանում:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի գ) ենթակետի հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «ԷՅ ԷՄ ԹԻ» տեղամասը վարչական տեսակետից գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի ենթաշրջանում և տեղակայված է Արամուս գյուղից 1.1կմ հարավ-արևելք, գյուղատնտեսական շրջանառությունից դուրս գտնվող 3.48 հա մակերեսով տարածքում: Տեղամասը հողածածկ և ասֆալտապատ ճանապարհներով կապված է Արամուս (1.3 կմ), Զովք (2.6 կմ), Ձորաղբյուր (4.5 կմ), Գետաշեն (5.5 կմ) և Կամարիս (1.5 կմ) գյուղերի, Աբովյան (6.0 կմ) և Երևան (27 կմ) քաղաքների հետ: Հայկական երկաթուղու Աբովյան կայարանը գտնվում է տեղամասից 5.7կմ հեռավորության վրա:

«Էյ Էմ Թի» ՍՊԸ կողմից բազալտի արդյունահանման նպատակով հայցվող տարածքը հանդիսանում է գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողեր: Բուն տեղամասի սահմաններում հողաբուսաշերտը բացակայում է, իսկ հողերը պիտանի չեն գյուղատնտեսական նպատակով օգտագործելու համար:

Գործունեության ենթակա տարածքում ստորերկրյա ջրերը բացակայում են բոլոր հետախուզափորվածքներում, ինչը բացատրում է բազալտների խիստ ջրաթափանցելիությունը:

Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի գործակալության Պետական Ընդերքաբանական

ՀՀ ԲՆՈՒՍԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ "ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO * РА ГОСУДАРСТВЕННЫЙ ЦЕНТР ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ "ЭКСПЕРТИЗЫ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ" ГНО * 02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

փորձաքննության հանձնաժողովի կողմից 2018 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 8 արձանագրությամբ, հուլիսի 1-ի դրությամբ: Հաշվեկշռային պաշարները 3.48հա տարածքի վրա՝ կազմում են 155.4հազ.մ³, ըստ A կարգի:

Հանքավայրի օգտակար հանածոն դիտարկվել է որպես լցանյութ ծանր բետոնների արտադրության համար, ճանապարհաշինարարության մեջ և այլ տեսակի շինարարական աշխատանքներում, համաձայն «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 ՀՍՏ ГОСТ-ի և "Песок для строительных работ" 8736-2014 ГОСТ-ի պահանջների:

Նախագծվող բացահանքի 3,48հա տարածքի բազալտների տարեկան մարվող պաշարները կազմում են՝ 31.714մ³, արդյունահանվող պաշարների քանակը կազմում է 147.000մ³, տարեկան՝ 30.000մ³, ծառայման ժամկետը՝ 4,9 տարի: Բացահանքի աշխատանքային ռեժիմը շուրջտարյա է /260 օր/, միահերթ /8 ժամ տևողությամբ/, ինգօրյա աշխատանքային շաբաթով:

Հանքավայրի տարածքի ծայրակետերի կոորդինատները ARM WGS 84 համակարգով.

1. X=4455037.8 Y=8472420.4
2. X=4455046.0 Y=8472528.3
3. X=4454910.7 Y=8472568.8
4. X=4454782.0 Y=8472580.0
5. X=4454694.0 Y=8472542.0
6. X=4454732.8 Y=8472489.8
7. X=4454890.7 Y=8472454.3

Ելնելով հանքավայրի տեղադրման լեռնաերկրաբանական, լեռնատեխնիկական պայմաններից օգտակար հանածոյի շերտի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների փոքր ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով: Նախագծված բացահանքն ունի հետևյալ պարամետրերը. ամենամեծ երկարությունը՝ 356մ, ամենամեծ լայնությունը՝ 116մ, ամենամեծ խորությունը՝ 9,4մ, բացահանքի օտարման տարածքը՝ 3,48հա:

Բացահանքի շահագործման ընթացքում տեղի են ունենում օգտակար հանածոյի անխուսափելի կորուստներ, որոնք մնում են բացահանքի կողերի բնամասերում, հատակում: Այդ կորուստները ընդհանուր կազմում են 8.400մ³ կամ 5,4%:

Բացահանքի տարեկան, օրական և հերթափոխային արտադրողականությունները հաշվարկային տարում ըստ լեռնային զանգվածի և նրա բաղադրիչների:

ՀՀ	Անվանումը	Չափման միավոր	Միջին արտադրողականությունը		
			տարեկան	օրական	հերթափոխում
	I Մարվող պաշար				
1	Բազալտներ	մ³	31714	121.98	121.98
	II Արդյունահանվող պաշարներ				
2	Մակաբացման ապարներ	մ³	21286	81.87	81.87
3	Բազալտներ	մ³	30000	115.38	115.38

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

4	Լեռնային զանգված	մ³	51286	197.25	197.25

Հանքավայրի բացումը կատարվելու է նրա արևելյան՝ 1578.0մ բարձրության հորիզոնից: Նախատեսված է ավտոճանապարհի կառուցում հանքավայրի հարավ արևելյան կողմից, գոյություն ունեցող ավտոճանապարհի 1578.7մ բարձրության նիշից մինչև բացահանքի 1578.0մ բարձրության հորիզոն: Ավտոճանապարհի երկարությունն է՝ 383.0մ: Հաջորդ 1574.5մ բարձրության հորիզոնը մշակվում է այդ ավտոճանապարհից կտրող կիսախրամի միջոցով առավելագույն թեքությունն ընդունվել է 102.2%: Հանքաստիճանների բարձրությունն ընդունված է 4.0մ:

Մակաբացման աշխատանքները նախատեսված է կատարել բուլդոզերի օգնությամբ, որի արտադրողականությունը 800մ³/հերթափոխ:

Բազալտի մանր բեկորներով ավազակավի հզորությունը տատանվում է 2.2մ-ից 3.6մ-ի սահմաններում, կազմելով միջինը 3.0մ, որոնցից 22.000մ³ ծավալը բուլդոզերով, իսկ 82.300մ³-ը ավտոինքնաթափով տեղափոխվելու է լցակույտ: Տեղափոխման հեռավորությունն է միջինը 0.5կմ:

Այս ապարները շահագործման 1-3-րդ տարիներին տեղափոխվում է մինչև 0.5կմ դեպի բացահանքի հյուսիսային մասում գտնվող արտաքին լցակույտ, այնուհետև 4-րդ տարուց սկսած հանքավայրի շահագործման զուգահեռ դրանք աստիճանաբար տեղափոխվում են դեպի հանքավայրի հարավային մասը և տեղադրվում բացահանքի արդեն արդյունահանված 1574.0մ բարձրության հորիզոնի վրա:

Ելնելով նախագծում ընդունված մշակման եղանակից, արտադրողականությունից, ինչպես նաև լեռնաերկրաբանական պայմաններից ընդունվել է արտաքին և ներքին լցակույտաառաջացում, 4.9 տարի հանքավայրի շահագործման տևողությամբ և հորիզոնի մշակման համար կիրառելով հորատապայթեցման եղանակը:

Հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը մոտակա բնակավայրից 1.1կմ, նախալեռնաթեքվածքային, թույլ ալիքաձև ձորակներով մասնատված ռելիեֆը, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը շրջակա բնակավայրերի տարածքում կլինի բնակելի գոտիների համար սահմանված նորմերից շատ ցածր:

Արամուսի բազալտների հանքավայրի տարածքում բացակայում է բուսականությունը, գետային ցանցերը, շինարարական կառույցները և հուշարձանները:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- արդյունահանման, բարձման և տեղափոխման ժամանակ փոշեգոյացման կանխում,
- աշխատանքների կատարման վայրում նյութերի/ թափոնների բաց այրման արգելում,
- հանքի տեխնիկայի և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում՝ բացառելով ավելորդ արտանետումները,
- սահմանված աշխատանքային ժամերի պահպանում՝ աշխատանքներն իրականացնել միայն ցերեկային ժամերին,
- աղմկախլացուցիչների տեղադրում շարժական կայանների և սարքավորումների վրա,
- սարքավորումներում կանխարգելիչ վերանորոգում՝ աղմուկը նվազեցնելու նպատակով,
- չօգտագործվող սարքավորումների անջատում՝ վառելիքի և քսայուղերի արտահոսքը կանխելու նպատակով,

վրա,

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- հանքի տեխնիկայի յուղում և լցավորում նախապես որոշված լցավորման կայաններում/ սպասարկման կետերում,
- դատարկ ապարների պահեստավորում հատուկ հատկացված վայրերում,
- յուղերի անվտանգ փոխադրում պահեստային տարածք, անվտանգ պահեստավորում, յուղերի հեռացում լիցենզավորված կազմակերպության կողմից,
- դատարկ ապարների լցակույտերի պարբերական ջրցանում փոշու գոյացումը նվազացնելու նպատակով:

Արամուսի բազալտների հանքավայրի շահագործման ընթացքում «Էյ Էմ Թի» ՍՊ ընկերությունը նախատեսում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

-մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, շաբաթական մեկ անգամ՝ հաճախականությամբ,
- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին երկու անգամ հաճախականությամբ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ դրանց պահպանման համար նախատեսված տեղից դեպի հավաքող փոսը ուղղությամբ, տարին երկու անգամ հաճախականությամբ:

Շահագործման աշխատանքներից հետո իրականացվելու է արդյունահանման աշխատանքների արդյունքով խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնում: Այն իրականացվելու է բացահանքի շահագործման 5-րդ (0.9ամիս) տարվանից սկսած, արդյունահանման աշխատանքներին զուգահեռ: Ընդամենը ռեկուլտիվացման ծախսերը կկազմեն 1613,8հազ. դրամ, որը կփոխանցվի շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին՝ ՀՀ կառավարության 23.08.2012թ.-ի N1079-Ն որոշմամբ հաստատված կարգին համաձայն:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 150հազ.դրամ:

Պատճառաբանական մաս. Նախատեսվող գործունեության փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները, ինչպես նաև Կոտայքի մարզպետարանը:

Դիտողությունների և առաջարկությունների արդյունքում հաշվետվությունը լրամշակվել է: Նախնական գնահատման հայտի և հաշվետվության փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Կոտայքի մարզի Արամուս համայնքում անցկացվել են հանրային քննարկումներ գործունեության իրականացման վերաբերյալ, որը հանրության կողմից արժանացել է հավանության:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում Արամուսի բազալտների հանքավայրի արդյունահանման նախագծի ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադիչներով կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՊՏԿ "ԷՔՍՊԵՐՏԱԶՆԻ ԿԵՆՏՐՈՆ"
РА ГОСУДАРСТВЕННАЯ ОРГАНИЗАЦИЯ "ЭКСПЕРТИЗНЫЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ"
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Փորձաքննական պահանջներ

-Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերին, բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրի պահանջներին (շրջակա միջավայրի՝ մթնոլորտային օդի, հողի, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության վրա ազդեցության կանխարգելմանը, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված բնապահպանական, արտակարգ իրավիճակների, անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակների հետևանքով առաջացող հնարավոր ազդեցությունների մեղմացմանն ուղղված միջոցառումներ և ծրագրեր):

- Գործունեության ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող, կենդանական և բուսական աշխարհ և այլն) մոնիթորինգի արդյունքները, հանքավայրեր շահագործող ընկերությունների կողմից՝ համաձայն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի և կառավարության «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշման պետք է տրամադրվեն շրջակա միջավայրի նախարարությանը յուրաքանչյուր տարի և հրապարակվեն նախարարության կայքում՝ հանրային իրազեկվածության նպատակով:

- Հանքի շահագործման ժամանակ պահպանել աշխատանքի անվտանգության նորմերը՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլխի համաձայն:

- Արդյունահանման աշխատանքներն ավարտելուց հետո անհրաժեշտ է ռեկուլտիվացիայի իրականացում:

-ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

Եզրափակիչ մաս

«Էյ Էմ Թի» ՍՊԸ կողմից Արամուսի բազալտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Հ. Մեսրոպյան